ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին

ԵԴ2/3916/02/24 ք. Երևան
11 Հունիսի 2024թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ա. Սաֆարյանի (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով «Կաուպերֆուդ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ «Կաուպերֆուդ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 488 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայցվորը 05.06.2024 թվականին էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Պատասխանողի՝ «Կաուպերֆուդ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 488 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ, որը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Սաֆարյանին է բաշխվել նույն օրը:
Նշված քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով դատավորի աշխատակազմին հասանելի է դարձել 06.06.2024 թվականին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն

ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
Միաժամանակ, Դատարանը գտնում է, որ Պատասխանող ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքից պետք է պահանջել «ԾՄՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ 24/1-3» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 199-րդ, 200-րդ, 202-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը.

ՈՐՈՇԵՑ

1. «Կաուպերֆուդ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի՝ «Կաուպերֆուդ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 488 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ հայցադիմումն ընդունել վարույթ:

2. ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքից պահանջել Դատարան ներկայացնել «ԾՄՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ 24/1-3» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արմինե Սաֆարյան Digitally signed by SAFARYAN ARMINE 6107840465

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am